ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ



Հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների

միջազգայնացման գործընթացի և ծրագրերի հարցաթերթիկների արդյունքների ամփոփման վերաբերյալ

ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգային գործընթացները և միջազգայնացման ներուժը ուսումնասիրելու նպատակով, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) արտաքին կապերի բաժինը անցկացրել է հարցում, որի նպատակն էր, օգտագործելով հարցաթերթիկի ուսումնասիրության արդյունքները, նպաստել ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններում միջազգային շարժունության պատուհանների նոր հնարավորությունների ստեղծմանը, խթանել միջազգային համագործակցությունը կրթության ոլորտում:

ԳԱԱ գիտական կազմակերպությունների ընտրությունը կատարվել է համագործակցության համաձայնագրերի հիման վրա՝ կնքված ԳԿՄԿ և համապատասխան գիտական կազմակերպության միջև, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ համապատասխան ամբիոնը:

ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի կողմից մշակված հարցաթերթիկները ուղարկվել են հետևյալ ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններին՝

- ✓ ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ մոլեկուլային և բջջային կենսաբանության ամբիոնը,
- ✓ ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ դեղագործական քիմիայի ամբիոնը,
- ✓ ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնը,

- ✓ ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ նեյրոֆիզիոլոգիա և տոքսիկոլոգիայի ամբիոնը,
- ✓ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ արևելագիտության ամբիոնը,
- ✓ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնը,
- ✓ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ լեզվաբանության ամբիոնը,
- ✓ ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնը,
- ✓ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ երկրաբանության ամբիոնը,
- ✓ ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը, որտեղ տեղակայված է ԳԿՄԿ կիրառական սեյսմաբանության ամբիոնը.

ԳԿՄԿ հարցաթերթիկը բաղկացած է հիմնական 5 բաժիններից՝

1. *Ընդհանուր տեղեկություն միջազգայնացման գործընթացի վերաբերյալ*
2. *Միջազգային շարժունություն (ներգնա և արտագնա)*
3. *Հետազոտության և կրթական ծրագրերի միջազգայնացում*
4. *Միջազգային ազդեցություն և տեսանելիություն*
5. *Հետազոտական և կրթական ծրագրեր*

1. Ընդհանուր տեղեկություն միջազգայնացման գործընթացի վերաբերյալ

Հարցաթերթիկի միջազգայնացման ընդհանուր գործընթացներին վերաբերող հարցերը ցույց տվեցին, որ վերոնշված գիտական կազմակերպություններում միջազգային գործընթացները իրականացվում են միջազգային հարցերի գծով խորհրդականների (օր.՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ մոլեկուլայինի կենսաբանություն ինստիտուտ) կամ համակարգող անձանց կողմից (օր.՝ ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն) կամ անհատական նախաձեռնությամբ (օր.՝ ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ): Մնացած այլ գիտական կազմակերպություններում բացակայում են միջազգային բաժնի կամ միջազգային աշխատանքները համակարգող անձանց տվյալները:

Հարցաթերթիկի արդյունքները ցույց տվեցին, որ նշված բոլոր գիտական կազմակերպությունները չունեն միջազգային գործընթացներին վերաբերող առանձին մշակված ռազմավարական պլան: Սակայն, առանձին գիտական կազմակերպություններ իրենց ռազմավարական ծրագրերում ներառել են միջազգային գործընթացին վերաբերող առանձին դրույթներ, օրինակ՝ ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ Գիտակրթական կենտրոնի «Նեյրոֆիզիոլոգիա և Տոքսինոլոգիա» ամբիոնի ռազմավարություն, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի ռազմավարական պլան, ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ:

ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտը այժմ նախապատրաստական աշխատանքներ է վարում Կանադայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Շվեդիայի, Նիդեռլանդների, Իրանի, Լիբանանի, Եգիպտոսի (ապագայում նաև այլ երկրների) պրոֆիլային կազմակերպությունների հետ մասնագիտական համագործակցություն ծավալելու ուղղությամբ: Ինստիտուտը մասնակցում է ասպիրանտների միջազգային համաղեկավարման ծրագրին (Բելգիայի Գենտի համալսարանի հետ), խրախուսում է գիտաշխատողների մասնակցությունը միջազգային դրամաշնորհային ծրագրերին:

Միջազգային համաձայնագրերի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը հիմնել է 2 միջազգային լաբորատորիաներ Գերմանիայի և Ռուսաստանի հետ համատեղ;

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտը որպես միջազգային գործունեությունը կարգավորող փասթաթուղթ նշել է հուշագրեր, համաձայնագրեր, սակայն չի տրամադրել օրինակները;

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջազգային գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը և աշխատանքները գտնվում են նախապատրաստական փուլում:

2. ***Միջազգային շարժունություն (ներգնա և արտագնա)***

Ինչ վերաբերում է ներգնա և արտագնա ակադեմիական միջազգային շարժունությանը, հատկապես ակտիվ գործունեություն է ծավալում ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, որը արտասահման մեկնող հետազոտական ծրագրերով 12 ասպիրանտ ունի և 3 ասպիրանտ՝ կրթաթոշակներով: Հիմնական մեկնելու երկրներն են Գերմանիա, Իտալիա, Չեխիա, Հունաստան և Էստոնիա: Ժամանող ասպիրանտների թիվը հետազոտական ծրագրերով կազմում է ընդհանուր առմամբ 3 ասպիրանտ՝ Թայլանդից, ԻԻՀ-ից և Գերմանիայից: ՀՀ ԳԱԱ ՄԳԻ-ն իրականացնում է ակադեմիական շարժունության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն, որը շրջանառվում է էլեկտրոնային փոստով, վեբ-կայքի և սոց. ցանցերի միջոցով:

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը ներկայացրել է հետազոտական ծրագրով 2 ասպիրանտ, որոնք ժամանել են ԻԻՀ-ից:

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտը ունի 2 մեկնող ասպիրանտ հետազոտական ծրագրերով, որոնք ուսանում են Ֆրանսիայում և ԱՄՆ-ում:

ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը փոխանակման ծրագրերով ունի 5 մեկնող ասպիրանտ (2+3), որոնք ուսանում են Իտալիայում, ՌԴ, Գերմանիայում, Շվեյցարիայում, Իռլանդիայում և փոխանակման ծրագրով 1 ժամանող ասպիրանտ: Կենտրոնը ակադեմիական շարժունության ծրագրերի վերաբերյալ տրամադրում է տեղեկատվական ապահովում:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը ասպիրանտների միջազգային համաղեկավարման ծրագրի շրջանակներում, հետազոտական ծրագրով ունի 1 արտագնա ասպիրանտ Բելգիայի, Գենտի համալսարան: Ակադեմիական զանազան ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ինստիտուտի նորությունների ցուցատախտակին:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը հետազոտական և կրթաթոշակների ծրագրերով ունի մեկական արտագնա ուսանող դեպի ՌԴ և Չինաստան և հետազոտական ծրագրերով ժամանող 2 ասպիրանտ ՌԴ-ից և Հունգարիայից:

Որպես միջազգային շարժունության ցուցանիշ ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը ներկայացրել է արտագնա 6 ասպիրանտ յուրաքանչյուր ծրագրով (հետազոտական և կրթաթոշակներով): Ուսանող ասպիրանտները մեկնում են Սերբիա, Պորտուգալիա, Ավստրիա, Չեռնոգորիա, Գերմանիա: Ինչ վերաբերում է ժամանող ասպիրանտներին, հետազոտական ծրագրերով ինստիտուտը ունի 5 ասպիրանտ ՌԴ-ից և ԻԻՀ-ից: Համաձայն հարցաթերթիկի տվյալների, ինստիտուտը տրամադրում է տեղեկատվական ապահովում ասպիրանտներին և աշխատակիցներին:



3. *Հետազոտության և կրթական ծրագրերի միջազգայնացում*

ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը միջազգային գիտահետազոտական անձնակազմում ներառում է 3 աշխատակից: Գիտահետազոտական ժամանակավոր գործունեություն ծավալելու նպատակով, ՄԿԻ ժամանած անձանց թիվը կազմել է 15 այցելու, ԱՄՆ, Գերմանիայից, Շվեյցարիայից, Թայլանդից, Կանադայից, Հոլանդիայից, ՌԴ և ԻԻՀ:

2014-2017թթ. ընկած ժամանակահատվածում 34 գիտաշխատող մեկնել է արտասահման հետազոտական ծրագրերով և 10-ը՝ կրթաթոշակներով: ՄԿԻ-ն պարբերաբար կազմակերպվում է սեմինարներ, ամենամյա գիտաժողովներ և ամառային դպրոցներ, գործնական դասընթացներ արտասահմանյան գիտնականների մասնակցությամբ, աշխատանքային լեզուն հիմնականում անգլերեն է, երբեմն ռուսերեն: ՄԿԻ միջազգայնացման ռազմավարությունը ուղղված է արտասահմանյան գիտական կազմակերպությունների և գիտական խմբերի ներգրավմանը համատեղ հետազոտություններում, համագործակցության բարձր մակարդակ ապահովելուն:

ԳԱԱ ՄԿԻ ենթակառուցվածքի պահպանման ծրագրի բյուջեում նախատեսված չեն արտասահմանյան գիտնականների և դասախոսների ընդունելության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Օտարերկրյա դասախոսներ և գիտնականականաններ հրավիրելու համար ծախսերը կատարվում են միջազգային և տեղական հետազատական և/կամ միջոցառումների կազմակերպման դրամաշնորհների միջոցով:
ԳԱԱ Պատմության ինստիտուտը գիտահետազոտական կազմում համալրել է 5 աշխատակից: Գիտահետազոտական նպատակով ինստիտուտ այցելել են հետևյալ երկրներից՝ ԱՄՆ, ՌԴ, Հունգարիա, Իրաք, Վրաստան, Լիբանան, ԻԻՀ, Բելառուս և այլն: 2014-2017 թթ. հետազոտական ծրագրերով մեկնած անձանց թիվը կազմում է 7 գիտաշխատող:

ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տվյալների համաձայն 2 ասպիրանտ ԻԻՀ-ից այցելել են կենտրոն գիտահետազոտական ժամանակավոր աշխատանքներ իրականացնելու նպատակով: 2014-2017 թթ. հետազոտական ծրագրերով արտասահման են մեկնել 37 գիտաշխատող այդ թվում ՝ 10 հոգի համատեղ գիտ. աշխատանքների համար, 27՝ գիտաժողովներին մասնակցելու համար: Կենտրոնը գիտական կազմակերպությունն օտարերկրյա դասախոսների և գիտական անձնակազմերի ներգրավելու ռազմավարություն և առանձին ֆինանսավորում չունի: ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը իրականացնում է 2 համատեղ միջազգային ասպիրանտական ծրագրեր:

ԳԱԱ լեզվի ինստիտուտը միջազգային գիտահետազոտական աշխատակազմում համալրում է 1 աշխատակից: Ընդհանուր առմամբ 4 հետազոտող Կանադայից, Լիբանանից, Եգիպտոսից և Հունգարիայից այցելել են ինստիտուտ գիտահետազոտական ժամանակավոր գործունեություն իրականացնելու նպատակով: 2014-2017 թթ. ընթացքում 5 գիտաշխատող հետազոտական ծրագրերով մեկնել են արտասահման: Ինստիտուտը միջազգային ասպիրանտական ծրագրորով իրականացնում է կրկնակի դիպլոմի 1 ծրագիր:

ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը գրանցել է 7 հետազոտող, որոնք հյուրընկալել են ԱՄՆ, ԻԻՀ, ՌԴ-ից ժամանակավոր գործունեություն իրականացնելու նպատակով, ինչպես նաև 2014-2017 թթ. գրանցվել է 6 արտագնա գիտաշխատող հետազոտական ծրագրերով և 6 արտագնա գիտաշխատող կրթաթոշակային ծրագրերով: ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի

ինստիտուտը, որպես անգլերենով կամ այլ օտար լեզուներով իրականացվող դասընթացներ/ծրագրեր նշել է, որ յուրաքանչյուր հինգշաբթի, ժամը 15:00-ին ինստիտուտում անցկացվում է Journal Club-ի հանդիպումներ, որը բաց է բոլոր ցանկացողների համար: Ինստիտուտը չի տրամադրում արտասահմանյան գիտնականների և դասախոսների ընդունելության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը ՌԴ-ից 1, Իտալիայից – 7 և Գերմանիայից – 1 հետազոտող է հյուրընկալել գիտահետազոտական ժամանակավոր գործունեություն ծավալելու համար: Ինստիտուտից մեկնող աշխատողների թիվը 2014-2019թթ.կազմում է հետազոտական ծրագրերով ՝ 109, փոխանակման ծրագրերով՝ 6 գիտաշխատող: Օտարերկրյա դասախոսների և գիտական անձնակազմերի ներգրավելու ռազմավարությունը և առանձին ֆինանսավորումը կատարվում է Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում:
Կենտրոնի ուսուցողական ծրագրերը, որոնք ներառում են արտասահմանում ուսուցողական կամ փոխանակման ծրագրեր (շարժունակության պատուհան) իրականացվում է Էրազմուս+ KA107 կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում:

ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հարցաթերթիկի արդյունքների համաձայն, գիտահետազոտական ժամանակավոր գործունեություն իրականացրել է 1 հետազոտող Չինաստանից և 1՝ Թուրքիայից: Մեկնած գիտաշխատողների թիվը հետազոտական ծրագրերով գրանցվել է 7 անձ և 12 անձ կրթաթոշակային ծրագրերով:

4. Միջազգային ազդեցություն և տեսանելիություն

Հարցաթերթիկի արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպություններն իրենց պաշտոնական կայքերում տեղեկությունը ներկայացնում են 2 լեզվով՝ հիմնականում անգլերեն, նաև ռուսերեն:

Ինչ վերաբերում է միջազգային համաձայնագրերին և գործընկերներին, ապա ըստ ՀՀ ԳԱԱ Ֆիզիոլոգիայի տվյալների ինստիտուտը ունի 3 համաձայնագիր Գերմանիայի, ՌԴ-ի և Բելառուսի հետ: Ինստիտուտը անդամակցում է տարբեր

միջազգային կառույցներին և համագործակցում է տարբեր միջազգային ծրագրերի շրջանակներում՝ IBRO, FENS, ISN, FEPS, ARMAZEG, TEMPUS, ISTC, NFSAT, CORDIS, CRDF, OSI, ANSEF, HFSP, NINDS, FULBRIGHT, HORIZON 2020:

<u>ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն</u>

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի միջազգային համաձայնագրերի և գործընկերների ցանկը տես ստորև՝

- Համագործակցության պայմանագիր «Նարխոզ համալսարան»-ի հետ, Ղազախստանի հանրապետություն
- Համաձայնագիր Սիբիրի դաշնային համալսարանի հետ
- Պայմանագիր գիտատեխնիկական համագործակցության մասին Բելառուսի հանրապետության շրջակա միջավայրի ռադիացիոն հսկողության և մոնիթորինգի հանրապետական կենտրոնի հետ
- Հուշագիր ՌԳԱ Սիբիրի բաժանմունքի Բայկալյան բնօգտագործման ինստիտուտի հետ
- Համաձայնագիր Բելառուսի ԳԱԱ Բնօգտագործման ինստիտուտի հետ
- Համաձայնագիր ՌԴ ԳԱԱ Աշխարհագրության ինստիտուտի հետ
- Համաձայնագիր Բժշկաէկոլոգիական հետազոտությունների արևելասիբիրյան ինստիտուտի հետ
- Արձանագրություն միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ
- Պայմանագիր Բալկանյան էկոլոգիական ասոցիացիայի հետ (B.E.N.A.)
- Համագործակցության պայմանագիր Կրակովի գյուղատնտեսական համալսարանի հետ (Լեհաստան)
- Գիտատեխնիկական համագործակցության պայմանագիր “GeoGraphic”ԱՏՀ և հեռազննման խորհրդատվական կենտրոնի հետ
- Վստահության պայմանագիր Սննդամթերքի, շրջակա միջավայրի և գործունեության անվտանգության ապահովման Ֆրանսիայի ազգային գործակալության հետ
- Գիտատեխնիկական համագործակցության պայմանագիր Սննդամթերքի և անասնաբուժական ռիսկերի գնահատման Լիտվայի ազգային ինստիտուտի հետ
- Հուշագիր Իմամ Խոմեյնի անվան միջազգային համալսարանի հետ

- Համաձայնագիր Իտալիայի ագրոէկոլոգիայի և անտառային կենսաբանության ինստիտուտի հետ (IBAF)
- Հուշագիր Դուբլինի համալսարանի հետ, (Իռլանդիա)
- Համագործակցություն Նավոյի պետական լեռնահանքային ինստիտուտի հետ (Ուզբեկստան)
- Լեռնային գործընկերության անդամակցություն Սննդի և գյուղատնտեսության կազմակերպության հետ (FAO), (Իտալիա)

<u>ԳԱԱ Պատմության ինստիտուտ</u>

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը տրամադրել է միջազգային համաձայնագրերի/ գործընկերների վերաբերյալ հետևյալ տվյալները: Ինստիտուտը համագործակցում է՝

- ՌԴ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր պատմության, Բելառուսի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ղազախստանի, Լիտվայի պատմության ինստիտուտների հետ
- Հունգարիայի Պազման Պետերի անվան կաթոլիկ համալսարանի հետ
- Եգիպտոսի Արաբական Հանրապետության Կահիրեի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի հետ
- Վրաստանի պետական համալսարանի պատմության ինստիտուտի հետ
- Ռումինիայի ԳԱԱ Հարավարևելյան Եվրոպայի երկրների հետազոտությունների ինստիտուտի հետ

Ինստիտուտը նաև անդամակցում է ԱՊՀ Պատմության ինստիտուտների միջազգային ասոցիացիայի և Ռուսաստանի պատմագիտական ընկերությանը:

2017 թ. ինստիտուտում ստեղծվել է Ընդհանուր պատմության գիտահետազոտական բաժին, որը զբաղվում է միջազգային ռեյթինգավորման գործընթացով:

- ***<u>Անհրաժեշտ է ուսումնասիրել Հունգարիայի Պազման Պետերի անվան կաթոլիկ համալսարանի հետ համագործակցությունը մեկնարկելու հնարավորությունները</u>***

ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտը համագործակցում է

- Հունաստանի Դեմոկրիտուսի համալսարանի հետ
- ՌԴ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի հետ
- Կուբանի պետական համալսարանի հետ
- Հարավղազախստանյան պետական համալսարանի հետ
- Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի հետ
- Կահիրեի համալսարանի նանասիրության ֆակուլտետի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի հետ
- Եգիպտոսի Ալ-Ահրամ ռազմավարական հետազոտությունների կենտրոնի հետ
- Եգիպտոսի Այն Շամս համալսարանի պատմության բաժնի հետ
- Վաշինգտոնի Հայկական ազգային ինստիտուտի հետ
- ՌԴ ԳԱ Հեռավոր Արևելքի ինստիտուտի հետ
- Սևծովյան-կասպիական տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի հետ
- Չինաստանի միջազգային հարաբերությունների ինստիտուտի հետ
- Դամասկոսի արաբական ուսումնասիրությունների կենտրոնի հետ
- Ֆրանսիական ինստիտուտի հետ
- Չինաստանի ժամանակակից միջազգային հարաբերությունների ակադեմիայի հետ:

Ուսանողների առկայության դեպքում, անհրաժեշտ է առաջնահերթորեն խորացնել համագործակցությունը Իտալիայի Բոլոնիայի համալսարանի հետ

ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի միջազգային համաձայնագրերի և գործընկերների ցանկը հետևյալն է՝

- Էստոնիայի կենսաբանական կենտրոն (Էստոնիա)
- Լայպցիգի համալսարան (Գերմանիա)
- ՌԳԱ ՀԱԲ Հյուսիսի կենսաբանական պրոբլեմների ինստիտուտ (ՌԴ)
- Հարավ-դաշնային համալսարանի կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ (ՌԴ)
- ՌԳԱ Բարձրակարգ նյարդային գործունեության և նյարդաֆիզիոլոգիայի ինստիտուտ (ՌԴ)
- Բելառուսական պետական տեխնոլոգիական համալսարան (Բելառուս)
- Համբուրգի Մոլեկուլային նյարդակենսաբանության կենտրոնի Մոլեկուլային նեյրոգենետիկայի ինստիտուտ (Գերմանիա)
- Համբուրգի Բջջային նեյրոֆիզիոլոգիայի ինստիտուտ (Գերմանիա)
- ՌԳԱ Բժշկագենետիկական գիտական կենտրոն (ՌԴ)
- Կալիֆորնիայի Սան-Ֆրանցիսկոյի համալսարան (ԱՄՆ)
- Պալացկու համալսարան (Չեխիա)
- Լեհաստանի ԳԱ Լյուդվիկ Հիրցվելդի անվան իմունաբանության և փորձարարական թերապիայի ինստիտուտ (Լեհաստան)
- Կոպենհագենի Գեոգենետիկայի կենտրոն (Դանիա)
- ՀԴՀ-ի Կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտ (ՌԴ)
- Կեմերովոյի սննդի արտադրության տեխնոլոգիական ինստիտուտ (ՌԴ)
- Կոն-Կենի համալսարան (Թաիլանդ)
- Ջ. Էլիավայի անվ. Բակտերիոֆագերի, մանրէաբանության և վիրուսաբանության ինստիտուտ (Վրաստան)
- Տաջիկստանի կանխարգելիչ բժշկության գիտահետազոտական ինստիտուտ (Տաջիկստան)
- Լոնդոնի համալսարանական քոլեջ (Մեծ Բրիտանիա)
- Ուփսալայի համալսարան (Շվեդիա)

ԳԱԱ ՄԿԻ-ի միջազգային ասոցիացիաների և անդամակցության թիվը հասնում է 20-ի:

- ***<u>Ուսանողների առկայության դեպքում, անհրաժեշտ է առաջնահերթորեն ուսումնասիրել Չեխիայի Պալացկու համալսարանի և Գերմանիայի Լայպցիգի համալսարանի հետ համագործակցությունը մեկնարկելու հնարավորությունները</u>***

ԳԱԱ Լեզվի ինստիտուտի ներկայացված գործընկերներն են՝

1. Գենտի համալսարան, Բելգիա
2. Բարդակչյան Գ., ԱՄՆ
3. Թրագուտ Յ., Ավստրիա
4. Խաչատրյան Ա., Շվեդիա
5. Կորտլանդտ Ֆ., Նիդեռլանդներ
6. Մոհամմադ Մ., Իրան
7. Սաքայան Դ., Կանադա
8. Տեր-Մերկերյան Ռ., Ֆրանսիա
9. Տոնապետյան-Դեմոպուլոս, Ֆրանսիա

Ինստիտուտը անդամակցում է Լիբանանի Արևմտահայերենի պաշտպանության հանձնախմբին:

- ***<u>Ուսանողների առկայության դեպքում, անհրաժեշտ է առաջնահերթորեն ուսումնասիրել Բելգիայի Գենտի համալսարանի հետ համագործակցությունը մեկնարկելու հնարավորությունները</u>***

5. Հետազոտական և կրթական ծրագրեր

ՀՀ ԳԱԱ Ֆիզիոլոգիայի ինստիտուտը ներկայացրել է 5 պայմանագիր որպես միջազգային հետազոտական նախագծերի հենք և 2 միջազգային կրթական նախագիծ, որը իրականացնում են ԱՄՆ և Բելառուսի հետ:

Հանցաթերթիկի 5-րդ կետի համաձայն, ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտը որպես միջազգային հետազոտական նախագիծ նշել է միջազգային դրամաշնորհային ծրագիր՝ «Հայերենի բառակազմության ձևային նկարագրություն և համապատասխան էլէկտրոնային շտեմարանի ստեղծում», որը իրականացվում է Գյուլբենկյան հիմնադրամի ֆինանսավորմամբ: Ինստիտուտը նշել է 1 միջազգային կրթական նախագիծ:

ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային և կենսաբանության ինստիտուտը ներկայացրել է միջազգային հետազոտական նախագծերը ցանկ:

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը իրականացնում է FP-7, HORIZON 2020 միջազգային հետազոտական ծրագրերը, ինչպես նաև ներկայացրել է 2 կրթական ծրագիր:

ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տվյալների համաձայն կենտրոնը իրականացնում է մի շարք միջազգային հետազոտական ծրագրեր:

ՀՀ ԳԱԱ 1 գիտական կամզակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը չի արձագանքել հարցաթերթիկին, իսկ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտը և ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ թերի են լրացրել հարցաթերթիկները, այդ իսկ պատճառով տվյալները բացակայում են:

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների միջազգային գիտական դրամաշնորհները 2014-2017թթ կտրվածքով

1. Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ

N	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվա-նումը	Դրամաշնորհի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը ($, €, դր., ռուբ.,GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
			սկիզբ	ավարտ	ընդհանուր	2014-2017 թ. համար	
2.	Ցածր տոքսիկությամբ բարձր հակաքաղցկեղային ակտիվությամբ օժտված ցինկի օքսիդի և հակաուռուցքային միացությունների համալիրներ	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն -ՄԳՏԿ International Science and Technology Center- ISTC	2012-2014		90 000 $	2 044 $ (2014)	Ֆ. Արսենյան
3.	Ներբջջային կալցիումի իոնների կողմից KCNQ1 կալցիումական անցուղիների մոդուլացիայի մեխանիզմի ուսումնասիրություն	Ֆոլկսվագենի հիմնադրամ Volkswagen Foundation	2013-2015		147 000 €	14 700 € (2014)	Յ. Շվարց, Վ. Վարդանյան
4.	Իշեմիկ կաթվածի պաթոգենեզում կոմպլեմենտի լեկտինային ուղու բաղադրիչները կոդավորող գեների (*MBL2, MASP1, MASP2*) պոլիմորֆիզմների հնարավոր ներգրավվածության ուսումնասիրություն	Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ ԳԱՏԱՀ National Foundation of Science and Advanced Technologies (NFSAT),	2013-2014		7 000 $	4 000 $ (2014)	Գ. Յականովա
5.	Շիզոֆրենիայի հետ ասոցացված C4B-ի անբավարարության ազդեցությունն ուղեղի զարգացման, մտավոր և ճանաչողական ֆունկցիաների վրա	ԱՄՆ Պետական դեպարտամենս The United States Department of State	2013-2014		20 400 $	9 500 $ (2014)	Կ. Մայիլյան
6.	Վտանգի ազդակի առկայության ներքո ԼՊՍ-ով ինդուցված նեյտրոֆիլների	Վիշեգրադյան հիմնադրամ,	2013-2014		2 300 €	920 € (2014)	Ա. Մարտիրոսյան

	ակտիվացման առանձնահատկու-թյուններն աուտոիմունային և աուտոբորբոքային գործընթացների զարգացման պայմաններում	Visegrad Fund http://visegradfund.org/				
7.	Հումորալ գործոնների ազդեցությունը ծայրամասային արյան մոնոցիտների ֆունկցիոնալ ակտիվության վրա ռևմատոիդ արթրիտի ժամանակ	Քաղաքացիական հետազոտու-թյունների և մշակումների հիմնադրամ Civilian Research and Development Foundation (CRDF Global)	2013-2014	7 000 $	4 000 $ (2014)	Դ. Պողոսյան
8.	Բուսական ծագման ԴՆԹ-ի մոլեկուլագենետիկական անալիզի համար թեստ համակարգերի մշակում՝ սննդամթերքի կեղծումների հայտնաբերման նպատակով	"Ինովացիոն Ռուսաստանի գիտական և գիտամանկա-վարժական անձնակազմ" Ռուսաստանի Դաշնության դաշնային նպատակային ծրագրի դրամաշնորհ	2013-2014	202 000 ռուբ.	90 000 ռուբ. (2014)	Բոյաջյան Ա.
9.	Հայաստանում հիվանդներից անջատված ոչ տիֆոիդ Salmonella enteric շտամերի դեղամիջոցների հանդեպ բազմակայունության գենետիկական հիմքերի մոլեկուլային բնութագրում	ԳԿԱՀ (ANSEF) Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ	2014-2015	5 000$	4 000$ (2014)	Ա. Սեդրակյան
10.	Ցիկլիկ ամինաթթուների ածանցյալ Շիֆֆի հիմքերը՝ միկոտոքսինների վնասակար ազդեցության դեմ քիմիական պաշտպանության համար	ԳԿԱՀ (ANSEF) Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ Միջազգային գի-տատեխնիկա-կան կենտրոն A-2116 (ISTC)	2014-2016	291 348 $	26 300 $ (2014) 138 520 $ (2015) 138 520 $ (2016) 29 210 $ (2017)	Ա. Բոյաջյան
11.	Պարբերական հիվանդության ժամանակ աուտոբորբոքային մեխանիզմների ուսումնասիրությունն աուտոգեն և հետերոգեն շիճուկով միջնորդավորված նեյտրոֆիլների ակտիվացման in vitro մոդելի միջոցով	ԳԿԱՀ (ANSEF) Գիտության և կրթության հայկական ազգային	2014-2015	5 000 $	4 000 $ (2014)	Գ. Մանուկյան

		հիմնադրամ				
12.	Բազմադաս գեների էքսպրեսիայի տվյալների վերլուծության համար աճող հենային ալգորիթմի բազմությունների մշակում	ԳԿԱՀ (ANSEF) Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ	2014-2015	5 000 $	4 000 $ (2014)	Ա. Առաքելյան
13.	CDCH2 և RND սպիտակուցները կոդավորող գեների ընդհանուր տարատեսակների և նրանց ֆունկցիոնալ հատկությունների ուսումնասիրությունը շիզոֆրենիայի ժամանակ	ԳԿԱՀ (ANSEF) Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ	2014-2015	5 000 $	4 000 $ (2014)	Ա. Խոյեցյան
14.	Համակարգչային դասարան կազմակերպելու համար	Ժնևի 1/1206 Արմենիա հիմնադրամ Geneva Armenian foundation	2014	8 184 €	8 184 € (2014)	Կ. Նազարյան
15.	Թիրախ ճանաչող մոլեկուլներն իշեմիկ կաթվածի ժամանակ	Ավգուստինուսի ֆոնդ Augustinus fund	2014	8 000 €	8 000 € (2014)	Գ. Յականովա
16.	Խաղողի խխունջի սպիտակուցային գեղձը որպես ծերացման դեմ բաղադրիչների աղբյուր. վառ ճառագայթման աղբյուրների կիրառմամբ հետազոտություն	Քենդլ հիմնադրամ Kendall foundation	2014-2016	12 000 000 դր.	400 000 դր. (2014)	Գ. Ղազարյան
17.	UCP1 գենետիկական տարբերակի տարածվածությունը և նրա կապը գերության և կարդիոմետաբոլիկ հիվանդությունների հետ	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր European Union's Research and Innovation funding programme EU FP7	2014-2017	64 000 €	16 000 € (2014) 16 000 € (2015) 16 000 € (2016) 14 000 € (2017)	Լ. Եպիսկոպոսյան

18.	PSFC. մոլեկուլային ուղիներում ազդանշանի հոսքի հաշվարկման ծրագրային փաթեթ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ ԳԿՀԱՀ (ANSEF)	2015	4968 $	4968 $ (2015)	Լ. Ներսիսյան
19.	Ինտերլեյկին 1b գենի պոլիմորֆիզմների և հետտրավմատիկ սթրեսային խանգարման կապը	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ ԳԿՀԱՀ (ANSEF)	2015	4968 $	4968 $ (2015)	Լ.Հովհաննիսյան
20.	Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի դեմ ֆլավոնոիդների հակավիրուսային հատկանիշների ուսումնասիրությունը	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ ԳԿՀԱՀ (ANSEF)	2015-2017	4968 $	4968 $ (2015)	Հ. Զաքարյան
21.	Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի ճնշումը հակավիրուսային ջրալույծ պերիլեն նուկլեոզիդային անալոգներով	Գիտության պետական կոմիտե և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամը ՀՀՌՀ	2015-2017	9 000 000 դր.	2 250 000 դր. (2017)	Զ.Կարապյան
22.	Կրծքագեղձի քաղցկեղի հետ ասոցացված BRCA ½ գեների մուտացիաների նկարագրումը հայկական պոպուլյացիայում	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2016	4 998 $	4 998 $ (2016)	Ա. Չավուշյան
23.	Արյան լիպիդային կենսամարկերներով կրծքագեղձի քաղցկեղի բացահայտման նոր թեստ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2016	4 963 $	4 963 $ (2016)	Գ. Հակոբյան

24.	KCNQ1 կալցիումական անցուղու էքսպրեսիայի և սուբմիավորային կառուցվածքի ուսումնասիրությունը ենթաստամոքսային գեղձի բետա բջիջներում և KCNQ1-ի մոդուլյացիայի ազդեցությունը ինսուլինի արտազատման վրա	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2016	4 997 $	4 997 $ (2016)	Վ.Վարդանյան
25.	Բազմակայուն սալմոնելների թիրախային վերացումը բակտերիաֆագերի միջոցով	Միջազգային գի-տատեխնիկա-կան կենտրոն (ISTC)	2016-2018	212 766 $	121 000 $ (2016) 73 403 $ (2017)	Ա.Սեդրակյան
26.	Kv2 և KCNQ1 լարում–կախյալ կալիումական անցուղիների ֆունկցիոնալ կարգավորումը ներբջջային երկվալենտ կատիոններով	Ֆոլքսվագեն Շտիֆտունգ հիմնադրամ Volkswagen Stiftung Foundation	2016-2019	90 000€	14 300€ (2017)	Վ.Վարդանյան
27.	Ապոպտոզի մոլեկուլային մեխանիզմները հետտրավմատիկ սթրեսային խանգարման ժամանակ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2017	5 000 $	5 000 $ (2017)	Դ.Ավետյան
28.	ԴՆԹ-ի վնասվածքների վերականգնման առանձնահատկությունները մարդու միելոիդ լեյկեմիայի ժամանակ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2017	5 000 $	5 000 $ (2017)	Ն.Բաբայան
29.	Հայկական պոպուլյացիայի գենետիկական կառուցվածքը մտ ԴՆԹ-ի և լայնագենոմային տվյալների հիման վրա	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2017	5000 $	5000 $ (2017)	Ա.Հովհաննիսյան
30.	Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի Arm07 շտամի դեմ Ապիգենինի հակավիրուսային ակտիվությունը	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ	2017	5 000 $	5 000 $ (2017)	Ա.Հակոբյան

		(ANSEF)				
31.	Նեյտրոֆիլների խաթարված ներհոսքը խթանող միգրացիոն գործընթացներն ընտանեկան միջերկրածովյան տենդի ժամանակ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF)	2017	5 000 $	5 000 $ (2017)	Գ.Մանուկյան
32.	Ճառագայթման կենսամարկերները շրջակա միջավայրում. ռիսկի գնահատման արդյունավետ միջոցներ	ՆԱՏՕ/NATO	2017	9 094 €	9 094 € (2017)	Մ.Մալաքյան
33.	Բնածին իմունիտետի բջիջներում օքսիդացման գործընթացների գենետիկական և մոլեկուլաբջջային խանգարումները և դրանց դերը 2-րդ տիպի շաքարային դիաբետի պաթոգենեզում	ՌԴ ԿԳՆ-Հայ-Ռուսական համալսարան	2017	5 000 000 դր.	5 000 000 դր. (2017)	Գ.Մանուկյան
34.	Կենսաբանական ուղիների պաթոլոգիական վիճակների քարտեզավորում	Գիտության կետական կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	6 271 920 դր.	3 135 960 դր. (2017)	Ա.Առաքելյան
35.	Պղինձ պարունակող նոր ճառագայթապաշտպանիչ միացությունները որպես հակաքաղցկեղային միջոց	Գիտության կետական կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	6 271 920 դր.	3 135 960 դր. (2017)	Գ.Յականովա
36.	Հայաստանի խաղողի գենետիկական ելանյութի բազմակողմանի բնութագրումը սելեկցիոն ներուժի բացահայտման նպատակով	Գիտության կետական կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	6 271 920 դր.	3 135 960 դր. (2017)	Ք.Մարգարյան

37.	Հայաստանում սուր լեյկեմիայի հիվանդացության համաճարակաբանական հետազոտությունը և ռիսկի գործոնները	Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարություն (BMBF)	2017-2019	13 251 600 €	695 € (2017)	Ն. Բաբայան

2. Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

N	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնոր-հի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը ($, €, դր., ռուբ.,GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
			սկիզբ	ավարտ	ընդհանուր	2014-2017 թ. համար	
1.	Արարատյան գոգավորության տարածաշրջանի հրաբխային վտանգի գնահատում	Հետազոտության մասնակցության ընդլայնումը հանուն գործընկերության PEER-Sciences հիմնադրամ, ԱՄՆ Partnerships for Enhanced Engagement in Research (PEER)	2014-2015		59 300 $	19 767 $ (2014) 39 533 $ (2015)	Խ.Մելիքսեթյան
2.	Մերձավոր Արևելքի երկրաշարժերի մոդել	Երկրաշարժերի մոդել Միջին Արևելքի համար ծրագիր Earthquake Model of the Middle East region (EMME)	2011-2014		89 000 €	22 250 € (2014)	Հ.Բաբայան

3.	Կովկասի տարածաշրջանի ակտիվ գեոդինամիկան	Ամերիկյան USAID ֆոնդ Հետազոտության մասնակցության ընդլայնումը հանուն գործընկերության Partnerships for Enhanced Engagement in Research (PEER)-Sciences	2014-2017	70 000 $	35 000 $ (2015) 5 158 $ (2017)	Ա.Կարախանյան
4.	ՀՀՇ(LIA)Շրջակա միջավայրերը և հասարակությունները հոլոցենի ընթացքում Հայաստանում	Ֆրանսիայի հետազոտությունների ազգային կենտրոն ՖՀԱԿ (CNRS)	2015-2016	4 143 000 դր.	4 143 000 դր. (2015)	Պ. Ավետիսյան Ա.Կարախանյան
5.	ՄՀԽ(IRG) Սեյսմիկ ռիսկը և բնական պաշարները	Ֆրանսիայի հետազոտությունների ազգային կենտրոն ՖՀԱԿ (CNRS)	2015-2016	7 709 000 դր.	7 709 000 դր. (2015)	Ա.Կարախանյան
6.	Բարձրադիր խոշոր լճերը որպես տեղական միջավայրիառանցքային բաղադրամասեր, բնական եւ տեխնածին ազդեցությունների ուսումնասիրություններ	Միջազգային գիտատեխնիկա-կան կենտրոն (ISTC)	2016-2019	29 278$	3 250 $ (2016) 36 227 700 դր. (2017)	Ա.Կարախանյան
7.	Մեծ Կովկասի սեյսմիկ կառուցվածքը և բարձրացումը	Միջազգային գիտատեխնիկա-կան				

		կենտրոն (ISTC)	2017-2019	15 100 $	15 100 $ (2017)	Հ. Բաբայան
8.	Վրաստանի մանգանի շրջակա միջավայրին պատճառված վնասների փորձաքննություն	Վրաց-Ամերիկյան Ալլոյս կազմակերպություն, Georgian American Alloys Inc	2017	40 000 $	40 000$ (2017)	Ա. Կարախանյան
9.	Կրթական ծրագրեր թանգարանում	Միջազգային Դի –Վի- Վի կազմակերպություն, DVV International,	2017	500 000 դրամ	500 000 դրամ (2017)	Գ. Գրիգորյան

3. Ա. Նազարովի անվան երկրաբանության և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ

N	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնոր-հի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը ($, €, դր., ռուբ.,GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
			սկիզբ	ավարտ	ընդհանուր	2014-2017 թ. համար	
1.	Սեյսմիկ խոցելիության գնահատման նպատակով շենքերի և նրանց կրող գրունտների սպեկտրալ սեյսմիկ բնութագրերի հետազոտություններ (Գյումրիի հին, ամրացված և նորակառույց շենքերի օրինակով)	Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ ԳԱՏԱՀ National Foundation of Science and Advanced	2013-2014		6 000 $	5 400 $ (2014)	Ջ.Կարա-պետյան

		Technologies (NFSAT)				
2.	Տարբեր նշանակության շինությունների մոնիթորնգի միկրոէլեկտրամեխանիկական տվիչների վրա հիմնված համակարգ	Միջուկային հետազոտությունների միավորված ինստիտուտ, Դուբնա և ԱՊՀ նանոտեխնոլոգիաների միջազգային ինովացիոն կենտրոն	2015-2016	500 000 (руб)	250 000 (руб) (2015) - (2016)	Ջ.Կարապետ յան
3.	Երկրաշարժերի հնարավոր նախանշանների կանխագուշակման նպատակով սեյսմականխագուշակման փորձադաշտերում հիդրոդինամիկ դիտարկումների կազմակերպման համար ստորգետնյա ջրերի հորատանցքային բարձր ճշտությամբ մակարդակաչափի մշակում	Միջուկային հե-տազոտությունների միավո րված ինստիտուտ, Դուբ-նա և ԱՊՀ նանոտեխնոլո-գիաների միջազգային ինովացիոն կենտրոն	2016-2017	650 000 ռուբ.	450 000 ռուբ. (2016)	Հ.Պետրոսյան
4.	երկրաֆիզիկական կայան՝ ջրային էկոհամակարգերի մշտադիտարկումների (մոնիտորինգ) համար	Միջուկային հե-տազոտությունների միավո րված ինստիտուտ, Դուբ-նա և ԱՊՀ նանոտեխնոլո-գիաների միջազգային ինովացիոն կենտրոն	2016-2017	650 000 ռուբ.	450 000 ռուբ. (2016) 150 000 ռուբ. (2017)	Գ.Վարդանյան
5.	Մշակել հորոտանցքերում ստորգետնյա ջրերի բարձր ճշտության մակարդակաչափ՝ սեյսմականխագուշակման պոլիգոններում հիդրոդինամիկ դիտարկումների կազմակերպման համար, որպես երկրաշարժերի հնարավոր նախանշան	Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ, ԱՊՀ Միջազգային ինովացիոն նանոտեխնոլոգիաների կենտրոն	2016-2017	650 000 ռուբ.	450 000 ռուբ. (2017)	Հ.Պետրոսյան

6.	Բազմաճոճանակ սեյսմասպեկտրոսկոպ	Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ, ԱՊՀ Միջազգային ինովացիոն նանոտեխնոլոգիաների կենտրոն	2017-2018	625 000 ռուբ.	450 000 ռուբ. (2017)	Ռ.Կարապետ յան

5. Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնիկական կենտրոն (ՕԴՔ ԳՏԿ ՕՔՒ)

N	**Թեմայի անվանումը**	**Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը**	**Դրամաշնոր-հի ժամկետը**		**Ֆինանսավորման ծավալը ($, €, դր., ռուբ.,GBP, CHF)**		**Թեմայի ղեկավարը**
			սկիզբ	**ավարտ**	**ընդհանուր**	**2014-2017 թ. համար**	
1.	Բնական միացությունների սինտոնների կառուցումը չհագեցած միացությունների հիման վրա `էլեկտրոֆիլ կատալիզատորների ներկայությամբ ***ՕԴՔ ԳՏԿ ՕՔՒ***	Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ ԳԱՏԱՀ National Foundation of Science and Advanced Technologies (NFSAT), Քաղաքացիական հետազոտու-թյունների և մշակումների հիմնադրամ Civilian Research and Development Foundation	2013 –2014		6 145 $	2 800 $ (2014)	Ք.Բալյան

		(CRDF Global)				
2.	Բարձր հակաուռուցքային ակտիվությամբ և ցածր թունայնությամբ օժտված հկաուռուցքային դեղամիջոցների և հակաուռուցքային միացությունների ցինկօքսիդային կոմպլեքսների մշակում ՕԴՔ ԳՏԿ ՕՔԻ, Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտ	Միջազգային գիտատեխնիկական կենտրոն -ՄԳՏԿ International Science and Technology Center- ISTC	2012– 2014	90 817 $	17 263 $ (2014)	Է.Առաքելովա Ս.Ղազարյան
3.	Տետրազոլոպիրիմիդինների և 1-ազիդո-2,7-նավթիրիդինների սինթեզը և հատկությունները ՕԴՔ ԳՏԿ ՆՕՔԻ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ ԳԿՀԱՀ (ANSEF)	2015-2016	5000 $	5000 $ (2015)	Ս. Սիրականյան
4.	Տրիազոլոպիրիմիդինային, տետրազո-լոպիրիմիդինային և պիրազոլային ֆրագ-մենտ պարունակող նոր հետերոցիկլիկ համակարգեր. սինթեզը և հատկու-թյունները ՕԴՔ ԳՏԿ ՆՕՔԻ	Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամ (ANSEF-4104)	2016-2017	5 000 $	5 000 $ (2016)	Ս. Սիրականյան

7. Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ

N	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնոր-հի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը ($, €, դր., ռուբ.,GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
			սկիզբ	ավարտ	ընդհանուր	2014-2017 թ. համար	
1.	Հարավ-արևելյան Եվրոպայի գիտական հանրության համար բարձր արտադրողականությամբ հաշվողական համակարգեր	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր European Union's Research and Innovation funding programme EU FP7 -HP SEE	2010-2013		115 8	28 725 € (	Վ.Սահակյան
2.	Եվրոպական գիտական հանրության համար ինտեգրված կայուն համաեվրոպական ինֆրակառուցվածք	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր European Union's Research and Innovation funding programme EU FP7 EGIInSPIRE	2010-2016		20 0(	2 312 € (2 4679 € (2 3348€ (2(	Վ.Սահակյան
3.	**Հայաստանի ինտեգրումը եվրոպական գիտահետազոտական տարածք. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ**	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր European Union's Research and Innovation funding programme –EU FP&	2012-2015		256 800 €	87 826€ (40 930 € (	Յու.Շուքուրյան

		INARMERA				
4.	**Բարձր մակարդակի ՏՀՏ երկխոսություն՝ ԵՄ-ԱԵԿԱ համագործակցության ամրացման համար**	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր European Union's Research and Innovation funding programme EU FP7 PICTURE	2012-2015	35 9	8 680 € (2 2114€ (2	Լ.Ասլանյան
5.	Սևծովյան Տնտեսական Համագործակցության երկրներում գրիդ և ամպային միասնական փորձնական միջավայրի մշակում g-Eclipse հենքի վրա	Սևծովյան տնտեսական համագործակցու թյուն-ՍԾՏՀ Black Sea Economic cooperation BSEC	2013-2014	9 00	2 396 € (2	Հ.Ասցատրյան
6.	Համաեվրոպական գիտակրթական մուլտի գիգաբիթ ցանց և հարակից ծառայություններ	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր European Union's Research and Innovation funding programme-(EU FP7) GN3plus, Horizon 2020	2013-2015 2015-2016 2015-2017	48 0 28 1 54 08	16 704 € (5975€ (2 28 107€ (2 12 665€ (2017)	Հ.Ասցատրյան
7.	**ԵՄ-ԱԵԿԱ ՏՀՏ համագործակցության տեղափոխումը դեպի HORIZON 2020**	Արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիա ԱԵԿԱ Eastern Europe and Central Asia EECA-2-HORIZON	2014-2016	43 7	6 876 € (2 17 733€ (21 103€ (2 4882 € (2	Հ.Սահակյան

8.	Անդրկովկասյան տարածաշրջանում շարունակական ուսուցման միջոցների/գործիքների մշակում՝ էլ.ուսուցում	Համաեվրոպական շարունակական ծրագիր համալսարանական կրթության համար Trans-European Mobility Programme for University Studies (TEMPUS)	2014-2017	131 1	8 062 € (2 10 454 € (32 239€ (2 35 78 € (2	Ն.Այվազյան
9.	Հարավ-կովկասյան համալսարաններում մաթեմատիկական ուսումնական ծրագրերի արդիականացումը ինժեներական և բնական գիտությունների հետազոտությունների համար՝ ներառելով կրթական ժամանակակից տեխնոլոգիաներ	Համաեվրոպական շարունակական ծրագիր համալսարանական կրթության համար Trans-European Mobility Programme for University Studies (TEMPUS)	2014-2017	50 9	0 € (201 8 640€ (2 --€ (201 4 742 € (2	Հ.Ասցատրյան
10.	Վիրտուալ հետազոտական միջավայրեր Հարավ-արևելյան Եվրոպայում և միջերկրական տարածաշրջանում	Եվրամիության Հորիզոն 2020 EU Horizon2020VI-SEEM	2015-2018	91 2	0€ (201 23 226€ (2 24 808 € (	Հ.Ասցատրյան
11.	Արևելյան համագործակցության կապուղիներ	Եվրամիության EU EaPCONNECT	2015-2019	195 0	0€ (201 47 542€ (2 137 700 € (	Հ.Ասցատրյան

8. Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն

N	Թեմայի անվանումը	Հիմնադրամի կամ կազմակերպության անվանումը	Դրամաշնոր-հի ժամկետը		Ֆինանսավորման ծավալը ($, €, դր., ռուբ.,GBP, CHF)		Թեմայի ղեկավարը
			սկիզբ	ավարտ	ընդհանուր	2014-2017 թ. համար	
1.	Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի Եվրոմիության հետ համագործակցության կարողությունների հզորացում. Հայաստանի ինտեգրում Եվրոպական գիտահետազոտական տարածաշրջանին	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր European Union's Research and Innovation funding programme EU FP7	2011-2014		133 816 €	78297 € (2014) 8 591€ (2015)	Շ.Ասմարյան
2.	Արևելյան գործընկերության համագործակցության ցանցի ստեղծում՝ «Կլիմայի փոփոխություն և շրջակա միջավայր»	Միջազգային համագործակցության ցանց Արևելյան գործընկեր երկրների համար International Cooperation Network for Eastern Partnership Countries Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր European Union's Research and Innovation funding programme	2014		800 €	800 € (2014)	Լ. Սահակյան

		(EU FP7)				
3.	Քաղաքային տարածքների կանաչ ենթակառուցվածքների ուսումնասիրություն՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի և հասարակության խնդիրները	**<<Գիտության և տեխնոլոգիայի Եվրոպական համագործակցության շարժում>> գիտական հանդիպումներ European Cooperation in Science and Technology** action –(Cost action FP 1204)	2014	2 485 € 2 500 € 600 €	2 485 € (2014) 2 500 € (2014) 600 € (2014)	Լ. Սահակյան Ն. Մաղաքյան Լ. Խաչատրյան
4.	Ամառային դպրոց՝ «Ռիսկերի կառավարում և արտադրական ձեռնարկություններում էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնահարցեր»	Էկոլոգիան հանուն խաղաղ գոյակցման	2014	473 000 դր.	473 000 դր. (2014)	Մ. Կաֆյան
5.	Միջազգային գիտաժողով՝ «Մթնոլորտային փոշի 2014»	Բնապահպանական ՀԿ-ների Կովկասյան ցանց Caucasus Environmental NGO Network –(CENN)	2014	870 400 դր.	870 400 դր. (2014)	Օ. Բելյաևա
6.	Ընդհանուր սննդաբաժնային ուսումնասիրություն և սննդակարգային էքսպոզիցիայի գնահատում	Եվրոմիության 7-րդ շրջանակային ծրագիր (EU FP7)	2014-2015	2000 €	2000 € (2015)	Դ. Պիպոյան
7.	Քաղաքային տարածքների կանաչ ենթակառուցվածքների ուսումնասիրություն՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի և հասարակության խնդիրները	<<Գիտության և տեխնոլոգիայի Եվրոպական համագործակցության շարժում>> գիտական հանդիպումներ	2015	740 € 500 €	740 €(2015) 500€(2015)	Լ. Սահակյան Ն. Մաղաքյան

		European Cooperation in Science and Technology action-(Cost action FP 1204 scientific meetings)				
8.	ԱՏՀ մեթոդների ստանդարտացումը քաղաքների տարածական կազմակերպ-ման և արդյունավետ կառավարման նպատակով	Ռուսաստանի Ֆունդամենտալ հետազոտությունների հիմնադրամ	2015	140 000 руб.	140 000 руб. (2015)	Ա. Հովսեփյան
9.	Կենսատեխնոլոգիաները որպես օդի աղտոտման վերահսկում	Գ. Գյուլբենկյան հիմնադրամ գիտաժողովների մասնակցության համար	2015	1200 €	1200 € (2015)	Գ. Ներսիսյան
10.	**Ուսուց**ողական դասընթաց «Բույսեր, էկոլոգիա և կառավարում արիդային տարածքների վերականգնման և բուսածածկի բարելավման նպատակով»	<<Գիտության և տեխնոլոգիայի Եվրոպական համագործակցության շարժում>> գիտական հանդիպումներ COST ACTION ES1104	2015	1000 €	1000 € (2015)	Մ. Նավասարդ յան
11.	QuickBird արբանյակից ստացված բարձր լուծաչափի տիեզերական նկարներ	Ամերիկյան Digital Globe ֆոնդ	2015	22 700 $	22 700 $ (2015)	Գ. Տեփանոս յան
12.	Հարավային Կովկասի քաղաքներ. Դեպի կայուն քաղաքային պլանավորում	ԵՄ Արևելյան գործընկերության երկրների IncoNet ծրագրի շրջանակում	2016	2 900 €	2 900 € (2016)	Շ. Ասմարյան

		գիտական նախագծերի և ինստիտուտների խմբավորման և Հորիզոն 2020 ծրագիր				
13.	33-րդ համաշխար-հային աշխարհագրական կոնգրես	Միջազգային աշխարհագրա-կան ընկերություն	2016	750 $	750 $ (2016)	Վ. Մուրադյան
14.	«Կլիմայի գլոբալ փոփոխություններ և բնական, ագրո և ուրբո համակարգերի էկոլոգիական մոնիթորինգ»	Ռուսական Պետական Ագրարային Համալսարան, Կ.Ա. Տիմիրյազևի անվան Մոսկվայի գյուղ. ակադեմիա	2016	15 000 ռուբ.	15 000 ռուբ. (2016)	Մ. Կիրակոսյան
15.	«Կլիմայի գլոբալ փոփոխություններ և բնական, ագրո- և ուրբո համակարգերի էկոլոգիական մոնիթորինգ»	Ռուսական Պետական Ագրարային Համալսարան, Կ.Ա. Տիմիրյազևի անվան Մոսկվայի գյուղ. ակադեմիա	2016	15 000 ռուբ.	15 000 ռուբ. (2016)	Լ. Խաչատրյան
16.	Բնության հետ համատեղ արտադրություն՝ քաղաքների զարգացման, ինովացման և կառավարման համար	Հորիզոն 2020 շրջանակային ծրագիր	2017-2022	190 000 €	45 825 € (2017)	Շ. Ասմարյան
17.	«Էրազմուս+ KA107 կրեդիտային շարժունություն» ծրագիր	Իտալիայի Տուշայի համալսարան	2017	32 000 €	32 000 € (2017)	Դ. Պիպոյան

18.	«Երկրագնդի հեռազննման ռեգիոնալ հիմնախնդիրներ» 4-րդ միջազգային գիտաժողով	ՌԴ Սիբիրյան Ֆեդերալ Համալսարանի Տիեզերական հետազոտութ-յունների ինստիտուտ	2017	50 500 ռուբ.	50 500 ռուբ. (2017)	Ա. Հովսեփյան
19.	Ամերիկյան NASA և Եվրոպական տիեզերական գործակալության «Տրանս-Ատլանտիկ 2017» թեմայով միջազգային ուսումնական սեմինար	Եվրոպական Տիեզերական Գործակալություն	2017	735 €	735 € (2017)	Վ. Մուրադյան
20.	«Կենտրոնական Ասիայի ջրեր» միջազգային գիտակիրառական ֆորում	Միջազգային Գիտատեխնի-կական Կենտրոն (ISTC)	2017	1 000 $	1 000 $(2017)	Վ. Մուրադյան
21.	«Լանդշաֆտների դինամիկայի և անտառների համաշխարհային ուսումնասիրութ-յունների Կովկասյան ցանցի USԱՐՏ» նախագծի աշխատանքային հանդիպում	Ամերիկյան ՆԱՍԱ (NASA) «USԱՐՏ» ծրագիր	2017	690 $	690 $(2017)	Վ. Մուրադյան
22.	«Կանաչ ենթակա-ռուցվածքների մոտեցում. քաղաքային անտառների կառավարում և ուսումնասիրում՝ կապված հասարակական և շրջակա միջավայրի ասպեկտների հետ» վերապատրաստում	Եվրամիության 7-րդ շրջանակային ծրագիր EU FP7 COST Action FP1204	2017	2 110 €	2 110 €(2017)	Գ. Ներսիսյան
23.	«Գործնական մոտեցումներ անտառների կայուն կառավարման ոլորտում նախագծերի մշակման վերաբերյալ» ամառային դպրոց	Եվրոպական հետազոտական ոլորտի ցանց (ERA-NET), “Sumforest”	2017	1 300 €	1 300 € (2017)	Լ. Խաչատրյան
24.	«Անտառների կայուն կառավարման փորձի, քաղաքականու-թյան և հետազոտու-թյունների կամրջում» ամառային դպրոց	Եվրոպական հետազոտական ոլորտի ցանց (ERA-NET), “Sumforest”	2017	1 900 €	1 900 €(2017)	Լ. Խաչատրյան

25.	«Բնահեն լուծումներ. Նորարարությունից մինչև ընդհանուր օգտագործում» միջազգային գիտաժողով	Տալլինի համալսարան	2017	600 €	600 €(2017)	Լ. Խաչատրյան
26.	«Հորիզոն 2020–ի անդամակցության փորձի փոխանա-կում» միջազգային գիտաժողով	Արևելյան համագոր-ծակցության ծրագիր (EaP PLUS) և Մոլդովայի Գիտությունների Ակադեմիայի միջազգային նախագծերի բաժին	2017	680 $	680 $(2017)	Օ. Բելյաևա
27.	«Սննդի մատակարարման շղթաներ» ամառային դպրոց	Գերմանական ակադեմիս խանակման ծառայությու	2017	1 250 €	1 250 € (2017)	Դ. Պիպո
28.	«Սննդի մատակարարման շղթաներ» ամառային դպրոց	Գերմանական ակադեմիս խանակման ծառայությու	2017	1 250 €	1 250 € (2017)	Ս. Ստեփա
29.	«Զարաֆշանի տարածաշրջանի ինտեգրացված նորարարական զարգացումները՝ ձեռքբերումներ, մարտահրավերներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողով	Նավոի Պետական Լեռնահանքային Համալսարան	2017	1 450 $	1 450 $ (2017)	Դ. Պիպո
30.	«Զարաֆշանի տարածաշրջանի ինտեգրացված նորարարական զարգացումները՝ ձեռքբերումներ, մարտահրավերներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողով	Նավոի Պետական Լեռնահանքային Համալսարան	2017	1 450 $	1 450 $ (2017)	Վ. Մուրադյան
31.	«Զարաֆշանի տարածաշրջանի ինտեգրացված նորարարական զարգացումները՝ ձեռքբերումներ, մարտահրավերներ և հեռանկարներ» միջազգային գիտաժողով	Նավոի Պետական Լեռնահանքային Համալսարան	2017	1 450 $	1 450 $ (2017)	Գ. Տեփանոսյան
32.	Օդի աղտոտվածության բուսականության վրա ազդեցության միջազգային համա-գործակցական ծրագրի 30-րդ գիտաժողով	Պոզնանի Բնագիտական համալսարան	2017	270 €	270 € (2017)	Գ. Տեփանոսյան
33.	«Էկոլոգիա և շրջակա միջավայրի քիմիա-2017» 6-րդ միջազգային գիտաժ	ԱՊՀ անդամ-երկրների հու միջպետական հիմնա	2017	530 €	530 € (2017)	Դ. Պիպոյան

34.	«Էկոլոգիա և շրջակա միջավայրի քիմիա-2017» 6-րդ միջազգային գիտաժողով	ԱՊՀ անդամ-երկրների հումանիտար միջպետական հիմնադրամ	2017	530 €	530 € (2017)	Գ. Տեփանոսյան
35.	«Էկոլոգիա և շրջակա միջավայրի քիմիա-2017» 6-րդ միջազգային գիտաժողով	ԱՊՀ անդամ-երկրների հումանիտար միջպետական հիմնադրամ	2017	530 €	530 € (2017)	Ն. Մաղաքյան
36.	«Էկոլոգիա և շրջակա միջավայրի քիմիա-2017» 6-րդ միջազգային գիտաժողով	ԱՊՀ անդամ-երկրների հումանիտար միջպետական հիմնադրամ	2017	530 €	530 € (2017)	Օ. Բելյաևա
37.	«Էկոլոգիա և շրջակա միջավայրի քիմիա-2017» 6-րդ միջազգային գիտաժողով	ԱՊՀ անդամ-երկրների հումանիտար միջպետական հիմնադրամ	2017	530 €	530 € (2017)	Գ. Ներսիսյան
38.	Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների սնդիկով աղտոտման խնդիրներին ուղղված տարածաշրջանային սեմինար	«Էկո-համաձայնություն» կենտրոն, Մթնոլորտային օդի պահպանության գիտահետազոտա-կան ինստիտուտ	2017	36 600 ռուբ.	36 600 ռուբ. (2017)	Գ. Մելքոնյան
39.	ՄԱԿ-ի ԵՏՀ «Կրթություն հանուն կայուն զարգացման» Ղեկավար կոմիտեի 12-րդ հանդիպում	ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով UNECE	2017	1 113 $	1 113 $ (2017)	Գ. Պողոսյան
40.	“EIT Food Entrepreneurship winter school-2017”	Քեմբրիջի համալսարան, Մյունխենի	2017	600 €	600 € (2017)	Ա. Հովհաննիսյան

		տեխնիկական համալսարան, Բելֆաստի թագավորական համալսարան				